**Հայ-Ռուսական համալսարանի ՀՀ ԲԿԳԿ-ի**

**063 մասնագիտական խորհրդին**

(Հասցե 0051, Հայաստանի Հանրապետություն,

Ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 123)

14.06.2024

# ԿԱՐԾԻՔ

**պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական**

**գիտությունների թեկնածու, Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի**

**Վերոնիկա Արտաշեսի Պետրոսյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ**

ԺԲ.00.06 – Միջազգային իրավունք մասնագիտությամբ.

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում հրապարակային պաշտպանությանը ներկայացված Վերոնիկա Պետրոսյանի գիտական ուսումնասիրությունը նվիրված է մարդու վերարատդարողական իրավունքների միջազգային – իրավական կարգավորման ուսումնասիրությանը: Ընտրված թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ որ միջազգային իրավունքի դոկտրինում ատենախոսության մակարդակով առաջին անգամ իրականացվել է մարդու վերարտադրողական իրավունքների և դրանց նորմատիվ բովանդակության համապարփակ, համակարգային վերլուծություն: Համապարփակ միջազգային իրավական վերլուծության արդյունքում, մարդու իրավունքների միջազգային իրավունքի գիտության մեջ ներմուծվում են նոր, փոխկապակցված հասկացություններ:

Հարկ է նաև նշել, որ հայկական և արտասահմանյան գրականությունում բացակայում են որևե հետազոտություններ, նվիրված վերարտադրողական իրավունքների միջազգային իրավական կարգավորմանը:

Թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը բովանդակային և կառուցվածքային առումով, համապատասխանում են նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, այն պատրաստված է թեմային առնչվող հիմնական աղբյուրների վերլուծության հենքով:

Գիտական աշխատությունը կազմում է 173 էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանված են վեց պարագրաֆների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության փորձառական հիմքերը: Բացի այդ, ներածության մեջ հիմնավորված է նաև աշխատանքի գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում (էջեր՝ 16-45) հեղինակի կողմից ուսումնասիրվել է մարդու վերարտադրողական իրավունքների իրավական բնույթն ու էությունը, ինչպես նաև գոյություն ունեցող սահմանումները: Արդյունքում հեղինակը առաջարկում է վերարտադրողական իրավունքների հեղինակային սահմանումն ու դասակարգումը:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջեր՝ 46-99) ուսումնասիրվում են մարդու վերարտադրողական իրավունքների միջազգային իրավական գործիքները և մեխանիզմները, որի արդյունքում հեղինակը առաջարկում է ընդունել Մարդու վերարտադրողական իրավունքների կոնվենցիա և Կանանց վերարտադրողական իրավունքների կոմիտե: Հեղինակը մշակել է Կոնվենցիայի տեքստը, որը պարունակում է վերարտադրողական իրավունքների վերաբերյալ հիմնարար դրույթներ, վերարտադրողական իրավուքների դասակարգումը, յուրաքանչյուր իրավունքի առանձին իրավական բովանդակությունը և այդ իրավունքների կատարման վերաբերյալ պետությունների պարտավորությունները, ինչպես նաև սահմանում է Կոնվենցիայի դրույթների պահպանման մոնիտորինգի մեխանիզմը:

Գիտական աշխատության երրորդ գլխում (էջեր՝ 100-145) հեղինակի կողմից քննության է առնում վերարտադրողական իրավունքների իմպլեմենտացիայի գործնական խնդիրները: Հեղինակը մասնավորապես ուսումնասիրում է հակաբեղմնավորման հասանելիության, սեռական կրթության (սեռական դաստիարակություն), հղիության արհեստական ընդհատման, ինչպես նաև օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաների իրավունքների իրականացման խնդիրները, և հատկապես կարևորվում է փոխնակ մայրության իրավունքի իրականացումը:

Թեկնածուական ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է աշխատանքի կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են և համարժեքորեն փաստարկված: Դրանք վստահաբար ունեն տեսական նշանակություն, քանի որ հեղինակի

կողմից իրականացված համապարփակ վերլուծությունը և դրա հիման վրա արված գիտական եզրակացությունները առանձնանում են մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն վերարտադրողական իրավունքների հայեցակարգային և նորմատիվ հիմքերի ուսումնասիրության հիմնարար մոտեցմամբ: Իսկ ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են կիրառվել վերարտադրողական իրավունքների իրականացման վերաբերյալ ինչպես միջազգային պայմանագրերի, այնպես էլ ներպետական նորմատիվ-իրավական ակտերի պատրաստման և վերանայման գործընթացում: Այս ուսումնասիրության դրույթները կարող են օգտագործվել նաև միջազգային և ազգային դատարանների իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև մարդու իրավունքների հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ:

Չնայած այն բանին, որ աշխատանքը կատարվել է բավականին բարձր մակարդակով, այնուամենայնիվ աշխատանքում կան դրույթներ, որոնք վիճահարույց են:

**Առաջին.** Հեղինակի կողմից պաշտպանության հանվող երկրորդ դրույթում առաջարկում է վերարտադրողական իրավունքների հետևյալ դասակարգումը՝ *«Վերարտադրողական իրավունքները բաժանվում են՝*

1. *ընտանիքի պլանավորման իրավունք՝ ազատ վերարտադրման ընտրության իրավունք, երեխաների քանակի և նրանց ծնունդների միջև միջակայքը ինքնուրույն որոշելու իրավունք, վերարտադրողական առողջության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունք, սեռական կրթություն ստանալու իրավունք:*
2. *վերարտադրողական խնդիրների վերաբերյալ բժշկական ծառայություններից օգտվելու իրավունք՝ հակաբեղմնավորիչների հասանելիության իրավունք, աբորտի իրավունք, վիրաբուժական ստերիլիզացման իրավունք, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների օգտագործման իրավունք, փոխնակ մայրության իրավունք, սեռական բջիջների նվիրատվության իրավունք:»:*

Կարծում ենք, որ կարող է խնդրահարույց լինել «երեխաների քանակի և նրանց ծնունդների միջև միջակայքը ինքնուրույն որոշելու իրավունք»-ը դարձնել իրավական կարգավորման առարկա: Այդ իսկ պատճառով հստակեցման կարիք ունի այն պնդումը, որ երեխաների քանակի և նրանց ծնունդների միջև միջակայքը ինքնուրույն որոշելու իրավունքը պետք է գտնվի հենց հանրային իրավական կարգավորման տիրույթում քանի որ հայտնի չեն այս ոլորտում պետական այլ միջամտությունների օրինակներ:

**Երկրորդ.** Պաշտպանության հանվող չորրորդ դրույթում հեղինակը առաջարկում է վերարտադրողական բռնության հետևյալ սայմանումը՝

*«Վերարտադրողական բռնությունը հարձակում է անձի վերարտադրողական ընտրության և վերարտադրողական ինքնավարության վրա՝ հարկադիր հղիության, հարկադիր ստերիլիզացման և հարկադիր աբորտի տեսքով, որը կարող է իրականացվել ցանկացած սեռի կողմից, ցանկացած սեռի անձանց նկատմամբ՝ սեռի, ռասայի և էթնիկ պատկանելություն հիման վրա:»:*

Պաշտպանության հանվող հինգերորդ դրույթում հեղինակն առաջ է քաշում այն միտքը, որ վերարտադրողական հարկադրանքը, թեև սերտորեն կապված է վերարտադրողական բռնության հետ, բայց նույնական երևույթ չէ: Այնուհետ հեղինակը սահմանումը՝

*«Վերարտադրողական հարկադրանքը միջամտություն է վերարտադրողական ինքնավարությանը՝ կնոջ վերարտադրողական ընտրությունները վերահսկելու նպատակով:: Այն ունի երեք ձև՝ հղիության պարտադրում, հակաբեղմնավորիչ սաբոտաժ և հղիության ելքի վերահսկողություն»:*

Կարծում ենք, որ անհրաժեշտ է ավելի հստակ սահմանազատել «վերարտադրողական բռնության» և «վերարտադրողական հարկադրանք» հասկացությունները, քանի որ ըստ հեղինակի կողմից առաջարկվող սահմանումների, թե վերարտադրողական բռնության, և թե վերարտադրողական հարկադրանքի դեպքում տեղի է ունենում հարկադիր հղիություն և հղիության ելքի վերահսկողություն: Հետևաբար կարող է վիճակահարույց լինել հեղինակի այն միտքը, որ «վերարտադրողական հարկադրանքը, թեև սերտորեն կապված է վերարտադրողական բռնության հետ, բայց նույնական երևույթ չէ:»

**Երրորդ.** Հեղինակի կողմից պաշտպանության հանվող ութերորդ դրույթում նշում է, որ *«Փոխնակ մայրության իրավունքը՝ որպես օժանդակ վերարտադրության իրավունք, նպատակ ունի պաշտպանել ամուսնական զույգի կամ միայնակ կնոջ՝ կենսաբանական երեխաներ ունենալու շահերը»:*

Հեղինակի կողմից առաջարկվող այս սահմանումը կարող է խնդրահարույց լինել, քանի որ միայնակ տղամարդկանց համար նման իրավունք չի նախատեսվում: Նմանատիպ մոտեցումը կարող է համարվել խտրականություն միայնակ տղամարդկանց նկատմամբ:

Նշված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում հեղինակի կողմից կատարված հետազոտությունը, այն հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, որում լուծվել են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն միջազգային իրավունքի զարգացման համար:

**Եզրակացություն**: Վերոնիկա Արտաշեսի Պետրոսյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական, նորույթ պարունակող համալիր գիտական ուսումնասիրություն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին:

Ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու **Վ. Քոչարյան**

Բարձրագույն դատական խորհրդի անդամ Վ.Քոչարյանի ստորագրությունը հավաստում եմ՝

**Ն. Գալստյան**
ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար